նշանն, դուք Քրիստոսի աշակերտ էք և ոչ ստութեան. բաւական եղեւ այդքան մեզ խաբելներդ. ինձ չէք խաբում այլ Աստուծոյ. մտածեցէք, դատաստան կա գալոյ պատասխան կա տալոյ. մի՛ ուսալք իշխանս և մի որդիս մարդկան և այլն, ինձի այնքան ըստոր էք համարում որ Շուղակաթի վանքին եւս արժանի չէք տեսնում. գրով գրէք, բայց արդեամբ և ոչինչ. գա ժամանակ որ ամաչէք. Ես իմ Աստուածն եմ յուսացեալ. դուք ձեր իշխանութիւնն. կամք Ձեր եղիցի. յիմաստնոց այսքանս բավիցի. իսկ յիմարաց լռեմ։

Ձերդ վեհանձնութեան խոնարհ ծառայ թօփալ և
փթեալ իբր եպիսկոպոս Հայոց
ՍԻՄԷՕՆ ԲԶՆՈՒՆԵԱՆՑ

№ 4
24 օգոստոսի 1836
ի ավերակս Սաղիանու
որ Շամախի

Պատասխան խնդրեմ ուղիղն և ոչ սուտն։

---

6 սեպտ. մէկ գլուխ շաքար առաւ գործակալ Տէր Դանիէլն վանքիս փողովն (սեպտեմբերի 6ին)։ Սուրբ Խաչի տօնի օրն որ է Վերացմանն քաղաքիցն երկու իշխանք եկին վանքս Պետրոս և Յարութիւնն խնդրեցին նվաստիս որ պատարագ մատուցանեմ, մատուցի, ետուն ժամուց 6 մանէթ. սեպտեմբ. 14ին ի 1835 հոկտեմբերի 18. սուրբ աւետարանչաց տօնի կիրակին Գէորգ սարկաւագն մեր օրհնեցաք աբեղայ, ըստ որում ոչ գոյր ժամասող և ես տկար գոլով ինձի ժամասելոյն օգնականութեանն համար, օրհնեցի թէպէտ ինքն չէր կամենում։

Սալեանու նաչալնիկ չինովնիկ ազա Ղէվանդն Վարդանեանց, մեզ համար ուղարկել էր մէկ ալտայալուխ ձուկն և 10 շահմայի. Աստուած շէն պահէ զինքն։

1837 թիվ. յունվար.

Նոր տարի որէր ուրբաթ, գործակալ Տէր Դանիէլն նոր տարի շնորհաւորէքի մեզ ուղարկեց մէկ գլուխ շաքար վանքի փողովն։